ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/169

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2018թ. թիվ 26-3/20193-18 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.11.2018թ. թիվ ԴՎԱ/4272 գրության հիման վրա, 06.11.2018թ. թիվ 26-3/20193-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն)գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.11.2018թ. թիվ ԱՀ-064 գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության 02.11.2018թ. թիվ ԴՎԱ/4272 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը որևէ հիմք չեն պարունակում «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ծառայությունները չմատուցելու, թերի կամ ուշացումով մատուցելու վերաբերյալ: Դրանց մեջ չկա որևէ պաշտոնական փաստաթուղթ, որով հանձնարարվել է պայմանագրի շրջանակում մատուցել ծառայություն և որը «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն չի իրականացրել, կամ իրականացրել է անպատշաճ:

ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ ՊՆ 02.11.2018թ. թիվ ԴՎԱ/4272 և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին ուղղված ՀՀ ՊՆ 31.10.18թ. N ԴՔԱ/4174 գրությունները չեն պարունակում ամբողջական և օբյեկտիվ տեղեկատվություն, գրություններում խնդիրները ներկայացված են միակողմանի և առկա չէ պայմանագրի միակողմանի լուծման հիմք, որը Ընկերության կողմից ներկայացվում է ստորև.

Ի սկզբանե 05.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-8/7-2 գնման պայմանագիրը հաստատվել է 12.07.2018թ., որը կարելի է տեսնել www.armeps.am կայքում պայմանագրի հաստատում բաժնում.

Անուն Ազգանուն	Նշումներ	Կարգավիճակ	Ամսաթիվ
Տարոն Աբրահամյան		Ուղարկվել է հաստատման	13/06/2018
Ռուդիկ Օհանյան		Հաստատված է	13/06/2018
Մակար Ղամբարյան		Հաստատված է	13/06/2018
Վահե Շուշանյան		Հաստատված է	19/06/2018
Արթուր Ասատրյան		Հաստատված է	19/06/2018
ԼՍ	ԳՄԱ: 50311240/1/10/2 Ընդհանուր արժեք: Սխալ նոր գումար 171500 ճիշտ է 0	Մերժված է	19/06/2018
ԼՍ	Հաստատված է LS-ի կողմից	Հաստատված է	12/07/2018

Պայմանագրի 7.1 կետի 2-րդ պարբերության համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է

հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:», այսինքն պայմանագրով սահմանված իրավունքները և պարտականությունները ուժի մեջ են մտել 12.07.2018թ. հետո, հետևաբար 2-րդ եռամսյակում նախատեսված 12 միավոր ծառայությունների մատուցումը չէր կարող իրականացվել հենց նույն եռամսյակում և խախտման պատասխանատուն ՀՀ ՊՆ-ն է, այլ ոչ թե «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն: Ինչպես նաև ՀՀ ՊՆ-ն չի ձեռնարկել որևէ գործողություն 2-րդ եռամսյակում նախատեսված քանակները 3-րդ կամ 4-րդ եռամսյակ տեղափոխելու հետ կապված և փաստորեն 2-րդ եռամսյակում նախատեսված 12 միավոր ծառայությունը ենթակա չէ մատուցման: Պայմանագրով մատուցման ենթակա են մնում միայն 3-րդ եռամսյակում 12 միավոր և 4-րդ եռամսյակում 11 միավոր ծառայությունները: Քանի որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն 3-րդ եռամսյակում մատուցել (հանձնել) է 20 միավոր ծառայություն, որից 8-ը փաստորեն 4-րդ եռամսյակում նախատեսվածից, ապա ընդամենը մնում է մատուցելու (հանձնելու) 3 միավոր ծառայություն 4-րդ եռամսյակի ընթացքում: Փաստացի մատուցված ծառայությունները գերազանցում են պայմանագրով՝ դեռևս մնացած, կատարման ենթակա քանակից 2 միավորով: Գործնականում «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն ավարտել է պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն ամբողջությամբ և նախատեսված ժամկետից շուտ:

Բացի դա, սարքավորումների սպասարկման և նորոգման աշխատանքներն իրականացվում են խափանված սարքավորումների առկայության դեպքում՝ պատվիրատուի կողմից ներկայացված պահանջի հիման վրա, այսինքն ՀՀ ՊՆ-ն տեղեկացնում է Ընկերությանը, որ պահանջ է առաջացել սպասարկել կամ վերանորոգել որևէ ստորաբաժանման պատճենահանող սարքը, որից հետո Ընկերությունը իրականացնում է դրա վերանորոգումը:

Առ 07.11.2018թ. դրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն չի ունեցել ՀՀ ՊՆ կողմից ներկայացված պատճենահանման սարքերի վերանորոգման կամ սպասարկման հայտ, համաձայն որի սարքավորումը չի զննվել կամ պահեստամասերի առկայության դեպքում չի վերանորոգվել, առավել ևս ՀՀ ՊՆ կողմից մինչ այժմ ոչ մի սարքավորում չի բերվել Ընկերության սպասարկման սրահ, ինչպես նաև բացի ՀՀ ՊՆ 31.10.18թ. N ԴՔԱ/4174 գրության, ՀՀ ՊՆ-ն որևէ կերպ չի տեղեկացրել կամ ծանուցել առկա «խնդրի» մասին:

Առ այսօր Ընկերությունը ՀՀ ՊՆ կողմից բանավոր կերպով տրամադրված տեղեկությունների հիման վրա այցելել է բոլոր ստորաբաժանումները, իրականացրել է զննում և տեղեկացրել է փոխարինման ենթակա անհրաժեշտ պահեստամասերի մասին: Այդ ընթացքում Ընկերությունը զննել է առնվազն 25 պատճենահանման մեքենա, որոնց համար Ընկերությունը չի վարձատրվել և որոնցից մի մասը կամ աշխատել են նորմալ, կամ խնդիրները չեն եղել կարգավորելի՝ առկա պայմանագրի շրջանակներում, կամ ՀՀ ՊՆ-ն չի ունեցել համապատասխան պահեստամասերը, օրինակ զինվորական հոսպիտալում և ռազմաօդային ավիացիայում (Արշակունյաց փ.) 2 պատճենահանման մեքենա ունեցել են լիցքավորման կամ թմբուկի բլոկի փոխարինման խնդիր (պայմանագրով նախատեսված չէ), ռազմական ոստիկանությունում անհրաժեշտ է եղել Canon iR 2520 մոդելի պատճենահանման սարքի մագնիսական լիսեռ, որը ՀՀ ՊՆ-ն չուներ և որը տեղադրվել է Ընկերության կողմից (բանավոր հավաստիացրել են, որ կփոխհատուցեն արժեքը), ռազմական ոստիկանության մյուս պատճենահանման սարքը Ընկերության կողմից զննելուց հետո ՊՆ-ն չի համաձայնվել վերանորոգմանը, ՀՀ ՊՆ վարչական շենքում պատճենահանման սարքերն աշխատել են նորմալ, Գլխավոր շտաբում աշխատել են նորմալ կամ ՊՆ-ն չի ունեցել պահեստամասերը (զննված և նորոգված պատճենահանող սարքերի ցանկը կցվում է):

Պայմանագրով նախատեսված չէ ծառայության մատուցման վայր և սարքավորումների տեղափոխման ծախսերը ներառված չեն պայմանագրի գնի մեջ, ինչից հետևում է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն պարտավոր չէ պատճենահանման սարքերի սպասարկման համար այցելել ՊՆ կամ ՊՆ-ի ստորաբաժանումներ, որը սակայն Ընկերությունն իրականացրել է իր հաշվին՝ առանց փոխհատուցում պահանջելու:

Պայմանագրի գնման ժամանակացույցով հաստատված քանակական ցուցանիշներն ապահովելը ի սկզբանե ՀՀ ՊՆ պարտավորությունն է, որը ՀՀ ՊՆ կողմից ապահովելուց հետո նոր միայն «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն կարող է մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունները՝ պահեստամասերի առկայության դեպքում:

Ընկերությունը նշել է նաև, որ ս/թ. օգոստոսի 10-ին «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն պայմանագրի 3.1 կետի 2-րդ պարբերության համաձայն ՀՀ ՊՆ-ին է տրամադրել իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող

փաստաթղթերը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3) և ծառայությունների մատուցման Բ4743184003 հաշիվը, որը առ այսօր հաստատված չէ և ունի «Չվճռված» կարգավիճակ: Հանձնման-ընդունման արձանագրությամբ ՀՀ ՊՆ-ին է հանձնվել իրականացված 20 միավոր ծառայություն ընդամենը 98.0 հազ.դրամ արժեքով: Պայմանագրի 3.2 և 3.4 կետերի համաձայն հանձնման-ընդունման արձանագրությունը մուտք անելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ՊՆ-ի կողմից չընդունվելու դեպքում այն համարվում է ընդունված և ենթակա է վճարման պայմանագրի 2.2.2 կետի և 4.2 կետի համաձայն՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, այսինքն մինչև 2018թ. օգոստոսի 31-ը ներառյալ: Պայմանագրի 5.5 կետի համաձայն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար ՀՀ ՊՆ-ն պարտավոր է «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկված տույժը՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը մինչ 01.11.2018թ. ներառյալ կազմում է 3038 դրամ:

Ամփոփելով վերոգրյալը Ընկերությունը եզրակացնում է, որ 05.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-8/7-2 գնման պայմանագրով՝

1. ՀՀ ՊՆ-ն նախատեսել է ծառայությունների մատուցման քանակներ ըստ եռամսյակների, որոնց չափով չի ունեցել և մինչև այսօր չունի խափանված պատճենահանման սարքեր և/կամ համապատասխան պահեստամասեր, այսինքն իրականացրել է գնման քանակի սխալ պլանավորում և չի ապահովել ու մինչ այժմ չի ապահովում պայմանագրով նախատեսված քանակի ծառայությունների մատուցման հնարավորությունը,

2. ՀՀ ՊՆ պատճառով պայմանագիրն ուժի մեջ է մտել ուշացումով, ինչի հետ կապված 2-րդ եռամսյակում նախատեսված ծառայությունները՝ պայմանագրում փոփոխություն իրականացնելուց հետո, կարող էին մատուցվել միայն 2018թ. հուլիսի 12-ից սկսած, իսկ մինչ պայմանագրում փոփոխություն մտցնելը ենթակա է իրականացման միայն 23

միավոր ծառայություն 3-4 եռամսյակների ընթացքում, որից 25 միավորը արդեն մատուցված է, սակայն հանձնված է 20 միավորը,

3. ՀՀ ՊՆ-ն չի իրականացրել պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումը՝ չի վճարել մատուցված ծառայության համար:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/169 ընթացակարգի շրջանակներում 12.11.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.11.2018թ. թիվ ԴՎԱ/4272 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը, հիմք ընդունելով իր և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև 05.06.2018թ. կնքված «ԳՀԾՁԲ-8/7-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.3-րդ կետի «բ» պարբերության պահանջը՝ 31.10.2018թ.՝ 2-րդ եռամսյակում 12 հատ, 3-րդ եռամսյակում՝ 4 հատ և 4-րդ եռամսյակում 11 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայությունների մասով, միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 31.10.2018թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/169 ընթացակարգի շրջանակներում 12.11.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով նախատեսված պարտականությունները, Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվել են մասնակի, որն ապացուցվում է կողմերի միջև կնքված հանձնման-ընդունման ակտերով: Պատվիրատուի

ներկայացուցիչը հայտնել է նաև, որ Ընկերությանը հայտերը ներկայացվել են բանավոր, նախազգուշացումները նույնպես իրականացվել են բանավոր:

Միևնույն ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ գրավոր դիրքորոշումը.

Ընկերության կողմից պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու մասին հիմնավոր ապացույց է հանդիսանում Ընկերության կողմից 25.09.2018թ. դրությամբ պայմանագրով նախատեսված ընդհանուր թվով 24 (ընդհանուր թվով՝ 35) հատ սպասարկման ծառայություն իրականացնելու պայմանագրային պարտավորության մասով ընդամենը 8 (ութ) հատը կատարված լինելու փաստը հաստատող փաստաթուղթը՝ ակտը: Հետևաբար՝ եթե Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացրել պայմանագրով 25.09.2018թ. դրությամբ նախատեսված 24 հատ ծառայության մատուցման փաստը ֆիքսելու վերաբերյալ փաստաթղթի փոխարեն ընդամենը 8 հատ, ուստի և այդ հանգամանքը ուղղակի վկայում է Ընկերության կողմից պայմանագրային պարտականությունների էական խախտման մասին, ինչն էլ իր հերթին հիմք է հանդիսացել Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման գործընթաց նախաձեռնելու համար:

Ընկերությունը պնդում է, որ չի եղել որևիցե գրավոր հայտ՝ սարքերի վերանորոգման համար, միաժամանակ ընդունում է, որ բանավոր հայտեր ստացել է, ինչը հաստատում է այն հանգամանքը, որ Ընկերությունը պատշաճ կերպով Պատվիրատուից ստացել է հայտեր, սակայն չի ներկայացրել այդ հայտերի հիման վրա կատարված աշխատանքները հաստատող փաստաթղթերը՝ ակտերը, քանի որ չի իրականացրել պայմանագրի հ. 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերով պահանջվող աշխատանքները:

Այն հանգամանքը, որ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, Պատվիրատուի կողմից Ընկերությանը տրվել է պայմանագրային քանակներից ոչ պակաս, առնվազն՝ 24 հատ ծառայության կատարման պահանջ-հայտեր, Կատարողը ոչ միայն չի հերքում, այլ նաև հաստատում է այդ հայտերի բանավոր կերպով ստացման հանգամանքը և միաժամանակ պնդում է, որ պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխանող 25 հատ ծառայություն է մատուցել, սակայն փաստացի Պատվիրատուին է ներկայացվել աշխատանքների կատարված լինելը հաստատող՝

ընդամենը 8 հատ ակտ, որոնք հաստատված են Ընկերության կնիքով և Ընկերության, ինչպես նաև աշխատանքը ընդունողի ստորագրություններով և կնիքով, ինչն էլ հիմք է հանդիսանում Պատվիրատուի կողմից կատարված աշխատանքները ընդունելու և դրա դիմաց վճարում կատարելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև 05.06.2018թ. կնքված «ԳՀԾՁԲ-8/7-2» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծարման նախաձեռնությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սկսվել է 25.09.2018թ.-ին, քանի որ այդ օրվա դրությամբ, Ընկերությունն արդեն իսկ բազմակի և էականորեն խախտել է պայմանագրով իրեն վերապահված պարտավորությունները՝ չնայած առկա պատվերներին, չի կատարել պայմանագրով նախատեսված քանակով ծառայությունների մատուցում, ինչը հավաստվում է այն իրողությամբ, որ Պայմանագրի կնքման պահից, Պատվիրատուի և Կատարողի միջև փոխադարձ համաձայնությամբ ընդունված աշխատակարգի համաձայն՝ Պատվիրատուն Ընկերությանը բանավոր կերպով հայտ է ներկայացնում ծառայություն մատուցելու անհրաժեշտության վերաբերյալ, իսկ Կատարողը մեկնելով Երևան քաղաքում տեղակայված ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանում՝ մատուցում է պայմանագրով նախատեսված ծառայությունը, ինչը հաստատվում է ծառայությունն ընդունողի՝ Պատվիրատուի ներկայացուցիչ՝ ՀՀ ՊՆ տվյալ ստարաբաժանման պատասխանատու անձի կողմից, սահմանված ձևաչափի ակտի ստորագրմամբ և կնքմամբ, որն ենթակա է Ընկերության կողմից ՀՀ ՊՆ պատվիրատու ստարաբաժանում ներկայացման, և որի հիման վրա իրականացվում են պայմանագրային պարտավորությունների կատարման հաշվարկները:

Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի կողմից Կատարողին հայտերը տրվել են բանավոր կարգով, քանի որ գրավոր ձևով պատվերը Ընկերությանը տալը նպատակահարմար չէ, ելնելով պայմանագրի առարկա հանդիսացող աշխատանքների բնույթից և իրականացման առանձնահատկություններից. մասնավորապես, հաշվի առնելով պահանջվող ծառայությունների անհրաժեշտ օպերատիվությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի շրջանակում Պատվրատուն և Ընկերությունն եկել են բանավոր կերպով հայտ տրամադրելու վերաբերյալ համաձայնության և նախկինում ևս, հայտերը Ընկերության կողմից ընդունվել են

բանավոր կարգով՝ հեռախոսազանգի միջոցով կամ անձամբ. դրա մասին են վկայում Ընկերության կողմից նախկինում բանավոր պատվերի հիման վրա կատարված աշխատանքները հաստատող ակտերը: Նշվածը աշխատակարգը չի հակասում ոչ պայմանագրի և ոչ էլ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի դրույթներին, այլ ըստ էության հանդիսանում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված գործարար շրջանառության սովորույթ, որը չի հակասում պայմանագր դրույթներին և հետևաբար դրա կիրառումը թույլատրելի է պայմանագրի կատարման շրջանակներում:

Ինչ վերաբերվում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նախքան պայմանագիրը լուծելը Կատարողին այդ մասին տեղեկացնելուն կամ թերությունները շտկելու հնարավորություն տալուն, ապա հայտնում եմ Ձեզ, որ Կատարողին մինչև պայմանագրի լուծումը բազմիցս տեղեկացրել և նախազգուշացրել են, որ նման վարքագծի շարունակական պահպանման դեպքում Պատվիրատուն, պայմանագրի 2.1.3 կետի համաձայն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը: Գրավոր ձևով այդ մասին Ընկերությանը չի տեղեկացվել, քանի որ Պատվիրատուին վերապահված այդ իրավունքը սահմանված է երկկողմանի կնքված պայմանագրով, որի մյուս օրինակը գտնվում է Ընկերության մոտ, և երկրորդը՝ քանի որ ոչ պայմանագրով և ոչ էլ օրենքով նման պարտադիր պահանջ նախատեսված չէ, ուստի և Պատվիրատուն նպատակահարմար չի գտել գրավոր կերպով նախքան պայմանագիրը 2.1.3 կետի հիմքով լուծելը պատվիրատուին այդ մասին գրավոր ծանուցելը, քանի որ արդեն իսկ խախտված են եղել պայմանագրի այնպիսի էական պայմաններ, որոնք վերացրել են պայմանագրի հետագա կատարման նպատակահարմարությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/169 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/169 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև 05.06.2018թ. կնքվել է ծառայությունների մատուցման թիվ «ԳՀԾՁԲ-8/7-2» ծածկագրով պայմանագիր:

2. Ընկերությանն ուղղված 31.10.2018թ. թիվ ԴՎԱ/1/174 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» պարբերության պահանջը, 18.09.2018թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.11.2018թ. թիվ 26-3/20193-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.11.2018թ. թիվ ԴՎԱ/4272 գրությունը և կից փաստաթղթերը, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև 05.06.2018թ. կնքվել է ծառայությունների մատուցման թիվ «ԳՀԾՁԲ-8/7-2» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն) ստանձնում է պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն պարտավորվել է 2018 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներում մատուցել 12-ական և 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 05.12.2018թ.՝ 11 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայություն:

Գործում առկա թիվ 03, 04, 05, 06, 07, 08, 09, 10 ակտերի համաձայն՝ Ընկերության կողմից 01.08.2018թ., 02.08.2018թ, 03.08.2018թ., 12.09.2018թ., 18.09.2018թ., 19.09.2018թ. մատուցվել են պայմանագրով նախատեսված ծառայությունները:

Ընկերությանն ուղղված 31.10.2018թ. թիվ ԴՎԱ/1/174 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն Պայմանագրի շրջանակներում պետք է մատուցեր ընդհանուր 35 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայություններ, որից 12 հատը՝ 2-րդ եռամսյակում, 12 հատը՝ 3-րդ եռամսյակում և 11 հատը՝ 4-րդ եռամսյակում, սակայն մատուցվել է ընդամենը 8 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայություններ 3-րդ եռամսյակում:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը Պայմանագրի 2-րդ եռամսյակում 12 հատ, 3-րդ եռամսյակում 4 հատ և 4-րդ եռամսյակում 11 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայությունների մասով 2018 թվականի սեպտեմբերի 18-ի դրությամբ միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Ուսումնասիրելով «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն, արձանագրում եմ հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև ծառայությունների մատուցման թիվ «ԳՀԾՁԲ-8/7-2» ծածկագրով պայմանագիրը կնքվել է 05.06.2018թ.:

Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ պայմանագիրն ուժի մեջ մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Միևնույն ժամանակ նույն ենթակետի երկրորդ պարբերությամբ սահմանվել է, որ ***Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:***

Համաձայն Ընկերության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրված Armeps համակարգի համապատասխան էջի քաղվածքի՝ «ԳՀԾՁԲ-8/7-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվել է ***12.07.2018թ.:***

Պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցել 2018 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ (բայց ոչ ուշ քան 05.12.2018թ.) եռամսյակների ընթացքում: Ընդ որում՝ 2-րդ եռամսյակի ընթացքում 12 հատ ծառայություն, 3-րդ եռամսյակի ընթացքում՝ 12 հատ ծառայություն և 4-րդ (բայց ոչ ուշ քան 05.12.2018թ.) եռամսյակի ընթացքում 11 հատ ծառայություն:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքն, արձանագրում եմ, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի՝ Պայմանագրով ստանձնած ծառայություններ մատուցելու պարտականությունը ծագել է ոչ թե 2-րդ եռամսյակում (ապրիլ-հունիս), այլ 3-րդ եռամսյակում (հուլիս-սեպտեմբեր), քանի որ Պայմանագիրը հաշվառվել է 12.07.2018թ.: Նման պայմաններում գտնում եմ, որ 2-րդ եռամսյակի ընթացքում 12 հատ ծառայություն մատուցելու պարտականությունը չի կատարվել Ընկերության կողմից, քանի որ Ընկերության նշված պարտականությունը 2-րդ եռամսյակի հունիս ամսվա համար (Պայմանագիրը կնքվել է 05.06.2018թ.) փաստացի գոյություն չի ունեցել՝ Պայմանագիրը արդեն իսկ 3-րդ եռամսյակում հաշվառվելու հետևանքով: Ընդ որում՝ անհրաժեշտ է նաև

ընդգծել, որ առկա չէ 2018 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում մատուցման ենթակա (սակայն Պայմանագիրն ուշ հաշվառվելու հետևանքով չմատուցված) 12 հատ ծառայությունը 3-րդ կամ 4-րդ եռամսյակների ընթացքում մատուցելու՝ Ընկերության պարտականության վերաբերյալ Պայմանագրի համապատասխան փոփոխություն:

Ընկերությունը 2018 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում պարտավորվել է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել 12 հատ ծառայություն: Համաձայն Պատվիրատուի կողմից տրամադրված՝ Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերաբերյալ ակտերի՝ Ընկերությունը օգոստոս-սեպտեմբեր ամիսների (վերջին՝ 19.09.2018թ. թիվ 10 ակտ) ընթացքում Պատվիրատուին մատուցել է 8 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայություն:

Միևնույն ժամանակ Ընկերությանն ուղղված 31.10.2018թ. թիվ ԴՎԱ/1/174 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն Պայմանագրի շրջանակներում պետք է մատուցեր ընդհանուր 35 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայություններ, որից 12 հատը՝ 2-րդ եռամսյակում, 12 հատը 3-րդ եռամսյակում և 11 հատը 4-րդ եռամսյակում, սակայն մատուցվել է ընդամենը 8 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայություններ 3-րդ եռամսյակում:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» պարբերության պահանջը, Պայմանագրի 2-րդ եռամսյակում 12 հատ, 3-րդ եռամսյակում 4 հատ և 4-րդ եռամսյակում 11 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայությունների մասով ***2018 թվականի սեպտեմբերի 18-ի դրությամբ միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:***

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության 31.10.2018թ. թիվ ԴՎԱ/1/174 գրության՝ Պայմանագիրը միակողմանի լուծվել է 2018 թվականի սեպտեմբերի 18-ին, մինչդեռ Ընկերության կողմից 3-րդ եռամսյակի ընթացքում մատուցվել են Պայմանագրով նախատեսված ծառայությունները և առկա չէ որևէ ապացույց ծառայությունը չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու վերաբերյալ, այլ գործում առկա պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերի համաձայն՝

Ընկերության կողմից ծառայությունը մատուցվել է ընդհուպ մինչև Պայմանագիրը լուծելու ժամկետը (18.09.2018թ.):

Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ 3-րդ եռամսյակն ընդգրկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներն ամբողջությամբ, հետևաբար 3-րդ եռամսյակի ընթացքում ծառայություններ մատուցելու ժամկետը նախատեսված էր մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ: Հետևաբար Ընկերությունն մինչև 30.09.2018թ. ներառյալ ուներ Պայմանագրով նախատեսված՝ 3-րդ եռամսյակի ընթացքում մատուցման ենթակա ծառայությունը մատուցելու պարտականությունը կատարելու իրավական հնարավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա հիմքերն, արձանագրում եմ, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, ուստի Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2018թ. թիվ 26-3/20193-18 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02228296) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ